

# ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԳՐՔԱՅԻՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԸ

Posted on November 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



**Լառա Դանիելյան**, Երևան, 19 Նոյեմբեր 2022

**«Աստված կարծես Հայաստանն ստեղծել է Սարյանի Եսթիզներով»:  
Գուրգեն Մահարի**

Օրերս Հայաստանի Ազգային պատկերասրահում բացվեց «Մարտիրոս Սարյան. գիրք և արվեստ» խորագիրը կրող ցուցադրությունը: Այն հանրությանը ներկայացնում է Սարյանի թողած հարուստ գեղարվեստական ժառանգության մաս կազմող գրքարվեստը և բացահայտում է գրական աշխարհի հետ մեծ վարպետի ունեցած լայն կապերը:

Ցուցադրությունը բազմաբովանդակ է. ընդգրկված են ինչպես բուլոբիս դեռ մանկությունից ծանոթ գրքային ձևավորումների նախանկարներ (եսթիզներ), այնպես էլ նորահայտներ: Ներկայացված են նաև գրողների դիմանկարներ: Ցուցանմուշների մեջ հատկապես հետաքրքրական է «Եգիպտական դիմակները», որը համադրված է Չարենցի սարյանական հայտնի դիմանկարի հետ:



Սարյանի

գրքարվեստը սկիզբ է առել Ռուսաստանում ապրելու տարիներին: Վաղ ստեղծագործական շրջանում վարպետը ձևավորել է ռուս գրողներ Միխայիլ Լերմոնտովի և Վլադիմիր Էյլսների ստեղծագործությունները, համագործակցել վերջինիս հետ: 20-րդ դարի սկզբին նա ստեղծել է Վահան Տերյանի բանաստեղծությունների ժողովածուի շապիկի Եսթիզը:

Հայաստանի Ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը նշում է. «Սարյանը, հաստատվելով Հայաստանում, Չարենցի գործուն միջամտության շնորհիվ նաև ներգրավվում է գրահրատարակչության ոլորտ: Չարենցը հսկայական ներդրում է ունեցել հայկական գրքարվեստի պատկերազարդման գործում, նա ղեկավարել է «Հայպետհրատ»ի գեղարվեստական բաժինը, և դա արել է ֆանտաստիկ հաջողությամբ, որովհետև, ինչպես հենց նույն Մարտիրոս Սարյանն է նշում՝ նա

մասնագետ էր ոչ միայն գրականության ոլորտում, այլև արվեստի փայլուն քննադատ էր, հրաշալի տիրապետել է արվեստի պատմությանը և հիանալի հասկացել ինչպե՞ս կարելի է գիրքն ու արվեստը իրար հետ համադրել: Սարյանական գրքարվեստը կարծես մի ճարտարապետական կառույց լինի իր շեմով, նախամուտքով, մուտքով և բոլոր մնացած կողմերով: Այդ ավանդույթը գալիս է դեռևս միջնադարից, մեր ձեռագիր մատյաններից... Այս ավանդույթների վրա հիմնվելով Սարյանն ու նրա ժամանակակիցները ստեղծեցին բացարձակապես այլ գրքարվեստ»:



Ցուցադրության համադրող Հայկուհի Սահակյանն էլ իր խոսքում նշում է, որ կան գրքարվեստի նմուշներ, որոնց նախանկարները չեն պահպանվել: Այդ բացը գալիս են լրացնելու ցուցադրված գրքերը, որոնք տրամադրել են Ազգային գրադարանը, Գրականության և արվեստի թանգարանը, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանը և Սարյան ընտանիքը: Ցուցադրությունը լրացվում է փոխկապակցված (ինտերակտիվ) նյութով. այս բաժնում գետեղված են գրողների՝ Սարյանի ձեռամբ ստեղծված դիմանկարները: Արդարև, Սարյանի թե՛ մոսկովյան և թե՛ երևանյան արվեստանոցներում հյուրընկալվում էին հայտնի գրողներ, ինչպես Աննա Ախմատովան, Իյա Էիրենբուրգը, Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Ուիլյամ Սարոյանը և դեռ շատեր: Այդ հանդիպումների ակնթարթները հավերժացել են Սարյանի վրձնած դիմանկարներում:

Հայկուհի Սահակյանն ասաց, որ ցուցադրությունը բաղկացած է մի քանի բաժիններից.

Առաջին սրահը ներկայացնում է վարպետի և դասական գրողների հարաբերությունները, վերջիններիս գրական երկերի սարյանական ոճավորումները:

Երկրորդ սրահում ներկայացված են Սարյանի ստեղծագործություններում տեղ գտած

խորհրդային և ազգային բնույթի ստեղծագործությունները: «Հաճախ նա այդ երկուսը համադրում էր, ինչի պատճառով խիստ գրաքննության էր ենթարկվում նրա արվեստը»:

Հաջորդ սրահում ներկայացված են հայկական ժողովրդական հեքիաթների այն զարդանկարները, որ Սարյանն ստեղծել է ռուսական «Ակադեմիա» հրատարակչության պատվերով: Դրանք հրատարակվել են երեք անգամ: Յուրաքանչյուր անգամին վարպետն իր նկարազարդումները վերամշակել է և հարստացրել նոր պատկերներով ու դրվագներով:



Վերջին

սրահում ներկայացված են պարսիկ միջնադարյան բանաստեղծ Ֆիրդուսու մահվան հազարամյակին առթիվ նրա «Շահնամե» պոեմի «Ռոստամ և Չոիրապ» պատումի ձևավորումները, որոնք Սարյանն ստեղծել է Չարենցի հորդորով:

Ցուցադրությունը բաց կլինի երեք ամիս:

**There are no comments yet.**